ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 շենք,
«Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն,
1-ին հարկ, 110 տարածք

+374 60 707 111
www.apricotcapital.am

apricot.

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Ուղղորդման Ծրագրի ընդհանուր նկարագիրը.**
   - 1.1. «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ ուղղորդման ծրագիրը («Ծրագիրը») հնարավորություն է տալիս գործող հաճախորդներին («Ուղղորդող») «Էփրիքոթ Կապիտալ» ՓԲԸ («Ընկերություն») հաճախորդ չհանդիսացող անձանց («Ուղղորդվող անձ») ուղղորդել Ընկերություն՝ օգտվելու Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից («Ծառայություն»), իսկ Ընկերությունը պարտավորվում է դրա դիմաց Ուղղորդողին վճարել վարձատրություն՝ ստորև նկարագրված կարգով և պայմաններով:
2. **Ծրագրին մասնակցության իրավունք.**
   - 2.1. Ծրագրի շրջանակներում Ուղղորդող կարող են հանդիսանալ Ընկերության հաճախորդ հանդիսացող անձինք:
   - 2.2. Ծրագրի շրջանակներում Ուղղորդող չեն կարող հանդիսանալ Ընկերության աշխատակիցները:
   - 2.3. Ուղղորդող անձը պետք է լինի նոր հաճախորդ, ով նախկինում երբևէ չի հանդիսացել Ընկերության հաճախորդ:
   - 2.4. Սույն ծրագրի շրջանակներում Ուղղորդվող անձ չեն կարող հանդիսանալ այն անձինք, ովքեր Ընկերության հաճախորդ են դարձել Ընկերության կողմից կնքված գործակալության պայմանագրերի շրջանակներում, և որոնց համար գործակալը արդեն իսկ ստացել է վարձատրություն այդ պայմանագրի շրջանակներում
3. **Նոր հաճախորդների ներգրավման գործընթացը.**
   - 3.1. Ծրագրից օգտվելու համար Ուղղորդողը պետք է մուտք գործի Ընկերության պաշտոնական կայք և լրացնի Ուղղորդման հայտը:
   - 3.2. Ուղղորդողը պետք է միանա Ծրագրին՝ Ընկերության կայքում «Ընդունում եմ բոլոր պայմանները» նշումը ընտրելով, որից հետո վերջինիս տրամադրվում է չկրկնվող Ուղղորդման հղումը:
   - 3.3. Ուղղորդողը պետք է Ուղղորդվող անձին տրամադրի չկրկնվող ուղղորդման հղում:
   - 3.4. Ուղղորդվող անձը Ընկերության հաճախորդ դառնալիս պետք է օգտագործի իրեն ուղղարկված չկրկնվող ուղղորդման հղումը:

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 շենք,
«Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն,
1-ին հարկ, 110 տարածք

+374 60 707 111
www.apricotcapital.am

apricot.

4. Վարձատրություն

- 4.1. Ուղղորդողն իրավունք ունի ստանալ վարձատրություն՝ Ուղղորդվող հաճախորդի կողմից Առևտրային հարթակների միջոցով ֆինանսական գործիքներով կատարված առքուվաճառքի գործարքների արդյունքում Ընկերության ստացած միջնորդավճարի 25%- ի չափով, բացառությամբ արտարժութային փոխարկումների:
- 4.2. Վարձավճարը տրամադրվում է եռամսյակային կտրվածքով, պայմանով, որ այն բավարարում կամ գերազանցում է 50.000 ՀՀ դրամի շեմը: Այս շեմից ցածր վարձավճարները տեղափոխվում են հաջորդ եռամսյակներ, մինչև կբավարարվի նվազագույն շեմը:
- 4.3. Վարձավճարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հարկման: Վարձավճարի չափը հաշվարկելիս կիրառելի հարկերը նվազեցվում են վարձատրության ընդհանուր գումարից:
- 4.4. Ընկերության պահանջով անհրաժեշտության դեպքում Ուղղորդող անձը պարտավորվում է տրամադրել հարկային ռեզիդենտության տեղեկանք:
- 4.5. Վարձավճարը փոխանցվում է օրացուցային եռամսյակի կտրվածքով՝ Ողղղորդող անձի՝ Ընկերությունում բացված բրոքերային հաշվին փոխանցում կատարելու միջոցով: Յուրաքանչյուր եռամսյակի համար վարձավճարը վճարվում է եռամսյակի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.6. Վարձավճարը տրամադրվում է միայն հաջողված ուղղորդումների համար: Պայմանագրի իմաստով ուղղորդումը համարվում է հաջողված, եթե միաժամանակ բավարարվում են ստորև նշված պայմանները՝
- 4.6.1. Հաճախորդ դառնալիս Ուղղորդվող անձն օգտագործում է իրեն ուղարկված չկրկնվող ուղղորդման հղումը,
- 4.6.2. Ծառայությունը փաստացի տրամադրվում է Ուղղորդվող անձին

5. Ընդհանուր պայմաններ

- 5.1. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն փոփոխել, կասեցնել, դադարեցնել Ծրագրի պայմանները՝ այդ մասին համապատասխան տեղեկատվությունը նախապես տեղադրելով Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 շենք,
«Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն,
1-ին հարկ, 110 տարածք

+374 60 707 111
www.apricotcapital.am

apricot.

- 5.2. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի իր հայեցողությամբ դադարեցնել Ուղղորդող անձի կամ Ուղղորդվող անձի մասնակցությունը Ծրագրին, եթե վերջիններս կասկածվում են զեղծարարության կամ սույն պայմանների խախտման մեջ:

6. Գաղտնիություն

- 6.1. Մասնակցելով Ծրագրին և՛ Ուղղորդողը, և՛ Ուղղորդվող անձը տալիս են իրենց համաձայնությունը՝ օգտագործելու իրենց անձնական տվյալները՝ Ծրագրի նպատակների համար՝ համաձայն ընկերության Գաղտնիության քաղաքականության:

7. Կիրառելի օրենսդրություն

- 7.1. Սույն պայմանները հանդիսանում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանդարտ պայմաններով պայմանագիր կնքելու հրավեր:
- 7.2. Ծրագրին մասնակցության հայտը լրացնելիս՝ Ուղղորդողը համաձայնվում է «Ուղղորդման ծրագրի մասնակցության պայմաններին՝ ուղղորդման հայտում «Համաձայն եմ Պայմաններին» նշումն ակտիվացնելու միջոցով: Վերջինիս հաստատումը համարվում է Պայմանագրի պատշաճ ստորագրում Ուղղորդողի կողմից:
- 7.3. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Սույն Պայմանագրից բխող կամ դրանց հետ կապված ցանկացած վեճ ենթակա է լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ դատարանների կողմից: